

**5.4. Հյուրանոցների գործունեությունը 2000թ.**

Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության ամփոփ տվյալների, 2000թ. հանրապետությունում գործել են 52\* հյուրանոց՝ 6412 մահճակալ-տեղ միաժամանակյա տարողությամբ (1999թ. 7203 մահճակալ-տեղ միաժամանակյա տարողությամբ 62 հյուրանոցի դիմաց), այդ թվում քաղաքներում՝ 49 հյուրանոց՝ 6369 մահճակալ-տեղ միաժամանակյա տարողությամբ, գյուղական վայրերում՝ համապատասխանաբար 3 և 43:

Հյուրանոցներ գործում են հանրապետության 48 քաղաքներից 27-ում և 3 գյուղական վայրերում:

2000թ. հանրապետության հյուրանոցների ընդհանուր մակերեսը կազմել է 246.2 հազ. քառ.մ, որից վարձակալությամբ տրվածը՝ 12.5 հազ. քառ.մ կամ 5.1%: Քաղաքային բնակավայրերում այդ ցուցանիշները կազմել են 245.7, 12.5 և 5.1% :

Բոլոր հյուրանոցային օգտագործման համարների բնակելի մակերեսը կազմել է 84.3 հազ. քառ.մ կամ ընդհանուր մակերեսի 34.2%: Քաղաքային բնակավայրերի հյուրանոցների մոտ այդ ցուցանիշները կազմել են 84.0 հազ. քառ. մ կամ 34.2%:

**Հանրապետության քաղաքային և գյուղական վայրերում գործող հյուրանոցային համարների քանակն ըստ տեսակների**

	Բոլոր համարների քանակը, միավոր	հյուրանոցային օգտագործման համարներ	այդ թվում				ոչ հյուրանոցային օգտագործման տրված համարներ
			որից				
			չքա-սենյակ	լյուքս	կիսա-լյուքս	սովորա-կան	
Ընդամենը	4094	3479	48	232	471	2728	615
այդ թվում քաղաքային վայր	4069	3454	48	232	457	2717	615
գյուղական վայր	25	25	-	-	14	11	-

2000թ. հանրապետության հյուրանոցների փաստացի զբաղվածությունը կազմել է 125.1 հազ. համար/օր, մահճակալների զբաղվածությունը՝ 166.7 հազ. մահճակալ/օր, որից քաղաքային վայրերի հյուրանոցներում՝ համապատասխանաբար 124.7 հազ. համար/օր և 166.0 հազ. մահճակալ/օր: Երևան քաղաքի հյուրանոցների այդ ցուցանիշները կազմել են՝ 103.6 հազ. համար/օր և 139.3 հազ. մահճակալ/օր:

Հանրապետության հյուրանոցներում ՀՀ ոչ ռեզիդենտների զբաղեցրած համար/օրը կազմել է 75.3 հազ., մահճակալ/օրը՝ 101.2 հազ., որը կազմել է ընդհանուր համապատասխան զբաղվածությունների 60.2% և 60.7%-ը:

2000թ. հաշվետվությունն ներկայացրած հյուրանոցների դրամական մուտքերը կազմել են 3490.0 մլն. դրամ: Մուտքերի 78.3%-ը ստացվել է շահագործումից, 6.6%-ը՝ վարձակալության տրված տարածքից, 10.4%-ը՝ լրացուցիչ վճարովի ծառայություններից, մնացածը՝ այլ բնույթի մուտքեր են: Հյուրանոցների շահագործումից ստացված մուտքերի 82.3%-ը ստացվել են ՀՀ ոչ ռեզիդենտներից:

Հյուրանոցների դրամական ծախսերը կազմել են 3630.0 մլն. դրամ: Ծախսերի կառուցվածքը հետևյալն է. նյութական ծախսեր՝ 10.8%, ոչ նյութական ծառայությունների վճարումներ՝ 28.9%, աշխատավարձի ֆոնդ՝ 25.4%, գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսեր՝ 3.3%:

Հանրապետության հյուրանոցային տնտեսության ծախսերը գերազանցել են մուտքերին 140.0 մլն. դրամով կամ 4.0 %-ով:

Հյուրանոցների գործունեության հիմնական ցուցանիշները

	Ընդամենը	այդ թվում			
		քաղաքային		գյուղական բնակավայրերում	
		ընդամենը	որից՝ երևանում		
Տարեկան զբաղվածությունը, հազ. մահճակալ/օր	166.7	166.0	139.3	0.7	
այդ թվում՝ տրվել է ՀՀ ոչ ռեզիդենտներին	101.2	101.2	100.0	-	
Մուտքերը, մլն. դրամ	3490.0	3486.1	3310.0	3.9	
այդ թվում՝ մուտքեր շահագործումից	2732.7	2729.1	2611.4	3.6	
որից՝ ՀՀ ոչ ռեզիդենտներին տրված տեղերից	2248.2	2248.2	2241.3	-	
Ծախսերը, մլն. դրամ	3630.0	3627.0	3436.1	3.0	
Մեկ մահճակալ-օր շահագործման հաշվով, հազ. դրամ	մուտքերը	16.4	16.4	18.7	5.5
	ծախսերը	21.8	21.8	24.7	4.5